ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ՝ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՆԻՍՏԻ

ք. Երևան **10.10.2024թ.**

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նախագահի և անդամների առաջարկությամբ Տեսչական մարմնի 2025 թվականի տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը հաստատելու, Տեսչական մարմնի կանոնադրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելու, Որակի ապահովման վարչության հաշվետվությունները և կատարողականի գնահատումները հաստատելու նպատակով 2024 թվականի հոկտեմբերի 9-ից 10-ը անցկացվել է արտահերթ նիստ՝ էլեկտրոնային քվեարկությամբ:

Քվեարկության նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Օրակարգ.

1. Հավանություն տալ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2025 թվականի տարեկան պահպանման ծախսերի նախահաշվին.
2. Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 755-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծին.
3. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2024 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների հաշվետվություններ.
4. Հաստատել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 1-ին և 2-րդ եռամսյակների գործունեության կատարողականների գնահատումները:

Քվեարկությանը մասնակցել են՝

Ա. Ավանեսյան	- ՀՀ առողջապահության նախարար (Խորհրդի նախագահ)
Ռ. Սարգսյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Տ. Հակոբյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ
Ա. Խոջոյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Լ. Բալյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Վ. Սիրունյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ժ. Մայիլյան	- «Իրական աշխարհ, իրական մարդիկ» սոցիալական հասարակական կազմակերպության նախագահ

Տ. Քեյան - «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպության աջակցության ծրագրերի ղեկավար

Շ. Դանիելյան - Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար

Հ. Լիլոզյան - Հայաստանի ամերիկյան համալսարանի Ջերալդ և Փաթրիշա առողջապահական գիտությունների ֆակուլտետի գիտաշխատող

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքում.

1) Ա. Ավանեսյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
2) Ռ. Սարգսյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
3) Տ. Հակոբյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
4) Ա. Խոջոյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
5) Լ. Բալյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
6) Վ. Սիրունյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
7) Ժ. Մայիլյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
8) Տ. Քեյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
9) Շ. Դանիելյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
10) Հ. Լիլոզյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ:

Քվեարկության արդյունքը՝ օրակարգի բոլոր հարցերին **10 կողմ, 0 դեմ:**

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո խորհուրդը որոշեց.

1. Հավանություն տալ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2025 թվականի տարեկան պահպանման ծախսերի նախահաշվին:

2. Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 755-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծին:

3. Հաստատել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 1-ին և 2-րդ եռամսյակների գործունեության կատարողականների գնահատումները:

4. Ընդունել ի գիտություն ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2024 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների հաշվետվությունները:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ